ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 39 -Ա
«24» ՓԵՏՐՎԱՐԻ 2023Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ « ՋԱՌԻԹԱՓԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՓԱՌԱՆՁԵՄ ԱԲԵԼՅԱՆԻ ՎՐԱ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, 16-րդ հոդվածի 3-րդ մասի բ) ենթակետով և հիմք ընդունելով Կարինե Գևորգյանի հետ կնքած 2021 թվականի հոկտեմբերի 26-ի N 462 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի դ) ենթակետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2023 թվականի փետրվարի 27-ից ՀՀ Վայոց ձոր մարզի «Զառիթափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարինե Գևորգյանի լիազորությունները դադարեցնել՝ լուծել նրա հետ կնքած 2021 թվականի հոկտեմբերի 26-ի N462 աշխատանքային պայմանագիրը:
2. 2023 թվականի փետրվարի 27-ից ՀՀ Վայոց ձոր մարզի «Զառիթափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն պարտականությունների կատարումը դնել նույն դպրոցի ուսումնադաստիարակչական գծով փոխտնօրեն Փառանձեմ Աբելյանի վրա:
3. ՀՀ Վայոց ձոր մարզի «Զառիթափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:

2/24/2023

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ք.Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023թ փետրվարի 24-ի
N 39-Ա որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ « ԶԱՌԻԹԱՓԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Հարությունյան Հուսիկ	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Անդամներ՝

Լուսինե Հարությունյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ
Սաֆարյան Աննա	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր տնտեսագետ